Հովհաննես Թումանյան

Օշախի երգը

Քեֆ անենք, տողերք այս պետք է մնա.
Ապրենք պարերով, խաղով ու թառով,
Կյանքներս թող միշտ այսպես անց կենա,
Թեկուզ և պակաս մի քանի տարով:

Գնանք մեր ջահել սրրտի ետևից,
Ուր կուզե տանի մին է մեզ համար .
Նա էլ մեզ նման հոգնել է ցավից,
Ուզում է հարբել մոլի, խելագար:

Իդեալներ ունենք փակած պադվալում,

Ո՞վ գիտի՝ այն էլ մրկները կերան,
Հույսեր ունեինք, տենչեր ունեինք
Իրար ետևից մաշվեցին կորան:

Էլ ընչի՞ հսկենք, ընչի՞ց վախենանք,
Ամեն բան անցավ իզուր, անկատար,

Գոնե մեր սրրտի ետևից գնանք,
Նա էլ մեզ նման այս կյանքում օտար...

Զարկեցեք թառին, թող գինին հոսի,
Պատերը դողան մեր ծափ-ծիծաղից,
Թող դըրսից նայող հիմարը ասի

Այս մարդիկ չունեն ո՛չ խելք, ո՛չ թախիծ:

1900